ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ. Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, *Երևան, հեղինակային հրատ., 2008, 420 էջ:*

Հայ-քրդական հարաբերությունների հարցը միշտ էլ առաջնահերթ տեղ է զբաղեցրել հայ հասարակական-քաղաքական շրջանակներում և պատմագիտության մեջ, որովհետև այդ հարաբերությունների մակարդակով է մեծ չափով պայմանավորվել հայ ազգային-ազատագրական շարժման ապագան: Ամենևին էլ պատահական չէ, որ մեր ազատագրական շարժման շատ գործիչներ ու գաղափարախոսներ որոշակի ջանքեր են գործադրել, թեև մեծ մասամբ ապարդյուն, հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ:

Քրդագիտության բնագավառում ծանրակշիռ ավանդ է ներդրել անվանի գիտնական, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայբուրդյանը: Դեռևս 1989-ին լույս տեսավ նրա «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» մենագրությունը, որը բարձրացրած խնդիրների կարևորությամբ ու հարցադրումներով, հիրավի, նոր խոսք էր թե՛ քրդագիտության, թե՛ հայագիտության բնագավառներում: Նրանում հատկապես համակողմանի քննության են ենթարկված հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցերը և լուսաբանված է քրդական գործոնի դերը այդ շարժման ձախողման առումով:

Եվ ահա հրապարակի վրա է Վահան Բայբուրդյանի «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» լայն ընդգրկումով շարադրված կոթողային աշխատությունը, որը, կարելի է ասել, հիմնահարցի շուրջ անվանի գիտնականի երկարամյա տքնաջան հետազոտությունների հանրագումարն է:

Աշխատությունը ոչ միայն խոշոր արժեք է ներկայացնում հայ ժողովրդի դարավոր հարևան քուրդ ժողովրդի պատմության կնճռոտ, քիչ լուսաբանված կամ առհասարակ չհետազոտված հարցերը նո՛ր լույսի տակ ներկայացնելու տեսանկյունից, այլև սկզբունքորեն նո՛ր խոսք է հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության վիճահարույց մի շարք խնդիրներ պարզաբանելու առումով:

Աշխատության գիտական կարևոր նորույթներից մեկն այն է, որ հետևողականորեն ու փաստարկված ձևով ցույց է տրվում, որ քրդերը Արևմտյան Հայաստանում տեղաբնիկներ չեն, այլ այդտեղ են թափանցել տարածքը օսմանյան թուրքերի կողմից գրավվելուց հետո՝ XVI–XVII դարերի պարսկա-օսմանյան երկարատև պատերազմների շրջանում, հենց իրենց՝ թուրք նվաճողների անմիջական օգնությամբ ու օժանդակությամբ:

Վ. Բայբուրդյանի՝ լայն կտավի այս աշխատությունը շարադրված է նորահայտ բազմաթիվ աղբյուրների և տարալեզու գրականության հիման վրա, ինչը մենագրության կարևոր արժանիքներից մեկն է:

Քննելով հայ-քրդական հարաբերությունների հարցը Արևմտյան Հայաստանում XIX դարի առաջին կեսին, գիտնականը ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում քրդերը ցրված էին Իրանից Փոքր Ասիայի խորքերը և մինչև Միջագետք, սակայն չունեին տարածքային որևէ ընդհանրություն: Նրանք ապրում էին ցեղերով, որոնք միավորված էին ցեղային միությունների՝ աշիրեթների մեջ, և մեծ մասը քոչվորներ կամ կիսաքոչվորներ էին, որ գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ: Ցեղապետերի ուժը և հզորությունը ցեղի շարքային անդամներից կազմված ջոկատներն էին՝ դոլամները:

Ցույց է տրվում, որ ըստ կրոնական դավանանքի քրդերի հիմնական զանգվածը

ուղղադավան մահմեդական էին՝ սուննիներ: Որոշ տոկոս կազմում էին իսլամի շիա ուղղության հետևորդները:

Վ. Բայբուրդյանը պարզաբանում է, որ կային նաև եզդիականություն դավանող քրդեր, որոնց մասին կարծիքներ կան, թե իբր նրանք առնչություն չունեն քրդերի հետ և առանձին ժողովուրդ են: Մահմեդական և եզդի քրդերի միջև գոյություն ունեցող ատելությունն էր գլխավոր պատճառներից մեկը, որ վերջիններս առանձնահատուկ հարաբերություններ ունեին հայերի հետ և հաճախ նրանց հետ հանդես էին գալիս մահմեդական քրդերի բռնությունների դեմ:

Հանգամանորեն կանգ առնելով քրդական ցեղային ավագանու՝ աղաների ու բեկերի կողմից հայ հողագործ բնակչության շահագործման ձևերի վրա՝ հեղինակը նշում է, որ ավարից ու կողոպուտից բացի Արևմտյան Հայաստանում քրդական ավատատերերին էր պատկանում հողային հարկի՝ աշարի գանձման իրավունքը, և որ պետական հարկերից բացի քուրդ հարկահավաքները հայերից բռնի գանձում էին նաև կամայական այլ հարկեր: Աշիրեթապետերի համար հայ հողագործը հարստության անսպառ աղբյուր էր: Քրդական քոչվոր ցեղերի ավագանին աստիճանաբար ձեռք էր բերում հայ բնակչությանը պատկանող հողերն ու արոտավայրերը: Հայերի վրա էր դրված քոչվոր քրդերին ձրի ձմեռային ապաստան տալու պարտավորությունը:

Ուսումնասիրության մեջ ընդգծվում է, որ քրդական աշիրեթապետերի կողմից հայերին սարսափի մեջ պահելը, թալանը, կեղեքումները ձեռնտու էին օսմանյան պետությանը, որովհետև նման պայմանները զրկում էին հայ ժողովրդին համախմբվելու և դիմադրելու կարողությունից:

Վերլուծելով Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանում (1853–1856 թթ.) ծավալված իրադարձությունները՝ Եզդանշիրի քրդական ապստամբությունը, Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի քաղաքական անվերապահ կողմնորոշումը և այլն, Վ. Բայբուրդյանը եզրակացնում է, որ դրանց հետևանքը եղավ օսմանյան կառավարության կողմից քրդամետ և հակահայ քաղաքականության որդեգրումը՝ քրդերին ու հայերին միմյանց դեմ հանելու ակնկալությամբ:

Ուշագրավ պարզաբանում է արվում, որ 1863 թ. օսմանյան կառավարության ընդունած Հայոց ազգային սահմանադրությունը անխուսափելիորեն թշնամության նոր դուռ բացեց քրդերի ու հայերի միջև, որովհետև այդ փաստաթղթի թելադրանքով նահանգներում ընտրված հայոց առաջնորդները քրդերի և թուրքերի կողմից ընկալվում էին իբրև հայոց նահանգապետ կամ գավառապետ, որը կարող էր սահմանափակել իրենց իշխանությունը:

Մատնանշելով 1867 թ. սուլթանական կառավարության հրատարակած օրենքը վիլայեթների վարչության մասին՝ Վ. Բայբուրդյանն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ դրանով Դիարբեքիրը, Մուշը, Վանը, Բիթլիսը, Հաքյարին և Զեզիրեն միավորվեցին մեկ վարչական միավորի մեջ և ստացան «Քրդստան» անվանումը, որի նպատակն էր այնպես անել, որ նշված նահանգներում ոչ մի տեղ հայ ազգաբնակչությունը մեծամասնություն չկազմեր: Եվ պատահական չէր, որ այդ քայլը հայերի մեջ առաջ բերեց ուժգին բողոք: Հեղինակը հետաքրքիր փաստեր է հրապարակում այն մասին, որ հայ առանձին մտավորական գործիչներ հանգում են այն եզրակացության, թե քրդական բռնաճնշումներից ազատվելու ելքը նրանց մեջ լուսավորություն տարածելն է: Այդ նպատակով Մկրտիչ Տիգրանյանը 1860 թ. կազմեց «Այբբենարան քրդերեն և հայերեն», «Լապտեր լուսատու» դասագրքերը: Նրա ջանքերով ստեղծվեց «Բարեկարգություն արևելյան» ընկերությունը, որին մասնակցում էին Հ. Սվաճյանը, Մ. Մոմջյանը և որի նպատակներից էր քրդերի հետ բարեկամության հաստատումը: Իսկ Գ. Սրվանձտյանցն առաջարկում էր քուրդ ժողովրդին սովորեցնել նստակյաց կյանք:

Արևմտահայ գործիչներ Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Գ. Չիլինկիրյանը և ուրիշներ կարծում էին, որ անհրաժեշտ է քուրդ ժողովրդին նախապատրաստել՝ հայ ժողովրդի հետ համատեղ թուրքական լծի դեմ դուրս գալու համար: Հայ հասարակական-քաղաքական գործիչ Գ. Նորատունկյանի կարծիքով՝ պետք չէ քրդերի դեմ անընդհատ բողոքել, այլ անհրաժեշտ է նրանց

հետ համաձայնության եզրեր գտնել: Նա Գ. Սրվանձտյանցին առաջարկեց այդ առումով գործիչ դառնալ ամբողջ քրդության մեջ:

Սակայն, ցավոք, այդ ձեռնարկներն արդյունք չտվեցին: Ընդհակառակը՝ 1870 թ. սկսած Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում տեղի ունեցան հայ-քրդական մի շարք ընդհարումներ, որոնք արդյունք էին օսմանյան կառավարության հակահայկական գրգռիչ քաղաքականության:

Գիտնականը դիպուկ բնորոշումներով մերկացնում է օսմանիզմի մեծապետական գաղափարախոսությունը, որն Օսմանյան կայսրությունում վերածվեց ազգային հարցը «լուծելու» հայեցակարգի: Ցույց է տրվում, որ այդ ուսմունքը կայսրության բոլոր ժողովուրդներին, անկախ նրանց ազգությունից ու կրոնից, դիտում էր որպես մի ամբողջություն, միասնական ազգ, իսկ դա նշանակում էր, որ կայսրությունում գոյություն ունի միայն մեկ ազգ՝ օսմանցի, որին ուղղություն տվող ուժը սուլթանական իշխանությունն է, տիրապետողները՝ թուրքերը, պետության միասնական լեզուն՝ թուրքերենը, օրենսդրությունը՝ շարիաթը: Դրանով ժխտվում և մերժվում էր ոչ թուրք ժողովուրդների ինքնիշխան գոյության իրավունքը: Ընդգծվում է, որ օսմանիզմը նպատակ ուներ թուրքացնել ողջ կայսրությունը, հարված հասցնել քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին և հավերժացնել թուրքերի տիրապետությունը:

Պատմաբանը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, թե ինչպես թուրք կառավարողները 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն սկսվելուն պես արևմտահայությանը դիտեցին որպես Ռուսաստանի դաշնակից տարր և նրա հետ վարվեցին իբրև թշնամիների: Պատերազմի ժամանակ օսմանյան իշխանությունները բռնի տեղահանում էին սահմանային շրջանների հայ բնակչությանը և աքսորում դեպի Անատոլիայի խորքերը, ինչն ուղեկցվում էր տարագրվողների զանգվածային ոչնչացմամբ: Ստացվում է, որ արևմտահայությանը տարագրման միջոցով ոչնչացնելու պլանները թուրքերը հղացել են դեռ այդ ժամանակաշրջանում:

Վ. Բայբուրդյանը փաստերով ցույց է տալիս, թե ինչպես շրջակա լեռնային շրջանների հայերը միացան Դերսիմի ապստամբած քրդերին և կատաղի մարտեր մղեցին թուրքական զորքերի դեմ: Բերվում են նաև հայ-քրդական համագործակցության մի շարք դեպքեր Վանի, Կարսի և Բայազետի շրջաններում: Սակայն, ինչպես ցավով նկատում է հեղինակը, հայ և քուրդ գյուղացիության հակակառավարական տարերային ելույթները լայն տարածում չգտան, ուստի կառավարությանը հաջողվեց հեշտությամբ ճնշել դրանք:

Հատուկ ուշադրություն նվիրելով հայ ազգային-ազատագրական շարժման ծավալման հարցերին՝ Վ. Բայբուրդյանը նշում է, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայության շրջանում արդեն հասունացել էին ազգային զգացումները: Իր ազգային արժանապատվությունը պահպանելու և օսմանյան անագորույն լուծը թոթափելու ձգտումը համակել էր հայ բնակչության բոլոր շերտերին:

Դրան զուգահեռ Արևելյան Հայաստանում ծայր էր առել «դեպի երկիր» շարժումը, իսկ Արևմտյան Հայաստանում հասունանում էր թուրքական բռնապետությանը զինված դիմադրություն հակադրելու գաղափարը, լայն թափ էր ստանում ժողովրդական վրիժառուների՝ հայդուկ-ֆիդայիների շարժումը, ստեղծվում էին ազատագրական գաղտնի կազմակերպություններ:

Շեշտվում է, որ քրդական խժդժություններն արդեն զայրացնում էին ողջ հայությանը, դիպչում նրա ազգային զգացումներին: Պատմաբանը հանգում է այն հետևության, որ հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանքի բորբոքումը այսուհետև դառնալու էր օսմանյան պետության ասիական քաղաքականության հիմնաքարը: Թուրքերն աշխատում էին համոզել քրդերին, որ հայերը նրանց թշնամիներն են, որովհետև ցանկանում են եվրոպական երկրների օգնությամբ ինքնուրույն պետություն ստեղծել և Քրդստանը դարձնել Հայաստան, իսկ քրդերին իրենց ենթարկել:

Վ. Բայբուրդյանը բացահայտում է հայությանը բնաջինջ անելու միջոցով Հայկական հարցը լուծելու վերաբերյալ մեծ վեզիր Քյամիլ փաշայի մանրամասն մշակած հրեշավոր ծրագիրը, որի գործադրման համար

թուրքական կառավարությունը լայնորեն օգտագործեց քրդական վերնախավին ու ցեղերին՝ նրանց զինելով և ուղղելով հայ բնակչության դեմ:

Հեղինակը զարգացնում է այն միտքը, որ արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը միանգամայն ինքնաբուխ էր և դրսից ներմուծված գաղափարների արդյունք չէր: Արևմտյան Հայաստանում հայ ազգային-ազատագրական շարժումները առաջ եկան ոչ թե ազգային կուսակցությունների հրապարակ գալու հետևանքով, ինչպես պնդում են պատմության թուրք կեղծարարները, այլ ընդհակառակը՝ այդ կուսակցությունները կազմվեցին հիշյալ շարժումների հետևանքով:

Գիտնականը հանգամանորեն կանգ է առնում քրդական համիդիե գնդերի կազմավորման և դրա հետապնդած նպատակների հարցի վրա: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ հայ ազգային կուսակցությունների երևան գալուց հետո սուլթան Աբդուլ Համիդի համար ուղղակի մղձավանջ դարձավ հայերի, քրդերի և ասորիների միավորման ու համատեղ ապստամբություն բարձրացնելու գաղափարը: Թուրքական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում այդ դրացի ժողովուրդների համախմբման հնարավորությունը վիժեցնելու համար, և այդպիսով ծնվեց համիդիե գնդերի կազմակերպման գաղափարը: Ինչպես նշում է Վ. Բայբուրդյանը, համիդիե գնդերը առհասարակ կոչված էին ծառայելու թուրքական կառավարության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական նպատակներին: Այդ գնդերում ծառայողներն ստանում էին օրենքի առջև անձեռնմխելիության իրավունք: Ինչպես ընդգծում է պատմաբանը, իրականում ռազմական այդ կազմակերպության օգնությամբ սուլթանը մտադիր էր ջախջախել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը և վերջ տալ Հայկական հարցին՝ կայսրության այդ գորդյան հանգույցին: Պատմաբանի բնորոշմամբ՝ համիդիե գնդերը Արևմտյան Հայաստանի տարածքում սկսեցին կատարել ռազմաոստիկանական ֆունկցիա, և հայերի վիճակը դարձավ ուղղակի դժոխային:

Վ. Բայբուրդյանն առանձնակի կանգ է առնում Սասունի 1894 թ. ապստամբության վրա, նշում, որ դրա դրոշը բարձրացրեց հուսահատության հասած հայ բնակչությունը: Ապստամբությունը ճնշելու գործը հանձնարարվեց 4-րդ բանակի մուշիր Զեքի փաշային, որի 12 հազարանոց բանակին միացան թուրքական կանոնավոր բանակի բազմաթիվ այլ զորամասեր, ինչպես նաև քրդական ցեղեր ու համիդիե գնդեր: Նշվում է, որ ապստամբությունը ղեկավարող հնչակյան կուսակցության գործիչներ Մ. Տամատյանը, Ռ. Շիշմանյանը (Տերգնկացի Քեռի) և ուրիշներ, քայլեր ձեռնարկեցին հայ-քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ, սակայն, դժբախտաբար, այդ փորձերը ոչ մի արդյունք չտվեցին: Սասունի բնակչությունը սրի քաշվեց և կողոպտվեց, բազմաթիվ գյուղեր հրո ճարակ դարձան: Հեղինակը նշում է, որ տեղի ունեցած ջարդի ամբողջ պատասխանատվությունը սուլթանական կառավարությունը բարդեց քրդերի վրա:

Ներկայացնելով XX դարի սկզբներին ապստամբ քրդական ցեղերի հետ հայ բնակչության համագործակցության բազմաթիվ փաստեր՝ Վ. Բայբուրդյանն ափսոսանքով եզրակացնում է, որ, այնուամենայնիվ, քրդական այդ շարժումները չհանգեցրին հայ ազգային-ազատագրական շարժման հետ ձուլվելուն, ու հնարավոր չեղավ հայ և քուրդ ժողովուրդների դաշինքն ընդդեմ օսմանյան բռնապետության: Հանգամանորեն լուսաբանվում են այդ դաշինքի չկայացման անհաղթահարելի պատճառները:

Մանրամասնորեն վերլուծելով 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո ստեղծված իրավիճակը՝ Վ. Բայբուրդյանը եզրակացնում է, որ երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանում հայ-քրդական հակամարտությունն ունեցավ իր շարունակությունը: Նշվում է, որ հայկական բարենորոգումները ձախողելու նպատակով, երիտթուրքական կառավարության դրդմամբ, օսմանյան խորհրդարանի քուրդ պատգամավորները կառավարությանը ներկայացրին «Ինքնավար Քրդստանի» մի նախագիծ: Ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքի վրա, որ քուրդ ազգայնականները հայկական բարենորոգումների իրագործումն ուղղակի սպառնալիք էին համարում քրդական հարցի համար:

Քննելով առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում հայ-քրդական հարաբերությունների հարցը՝ Վ. Բայբուրդյանն արձանագրում է, որ երիտթուրքական հանցագործ կառավարությանը հաջողվեց հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրն իրագործելու համար որպես գործիք լայնորեն օգտագործել քրդական ցեղային ավագանուն, մեծ ու փոքր աշիրեթներին, քոչվոր ու նստակյաց քրդերին, որոնք դարձան հայ ժողովրդի բնաջնջման մեքենայի կարևորագույն մասերից մեկը: Շեշտվում է, որ, դառնալով երիտթուրքական կառավարության հայասպան ծրագրերի իրականացման մեղսակիցներ, քրդերը որոշակի դերակատարություն ունեցան նաև Վասպուրականում, Սասունում, Մուշում, Շատախում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռում և այլ վայրերում տեղի ունեցած հայերի գոյամարտը ճնշելու գործում:

Հեղինակը չի թաքցնում այն իրողությունը, որ Դերսիմի քրդերը պատսպարեցին և կոտորածից փրկեցին շուրջ 20 հազար հայերի, Խութի շրջանի և Մշո դաշտի քրդերը՝ 12 հազար հայերի, իսկ քուրդ մի շարք հոգևոր առաջնորդներ ու քաղաքական գործիչներ դրսևորեցին հայապաշտպան դիրքորոշում: Այնուամենայնիվ, հեղինակը գտնում է, որ Հայոց ցեղասպանության համար քրդերը նույնքան պատասխանատվություն են կրում, որքան թուրքերը:

Քրդագետ գիտնականը ուշագրավ փաստեր է ներկայացնում այն մասին, որ արևմտահայության ոչնչացումից հետո երիտթուրք ազգայնամոլները ձեռնամուխ եղան հենց քրդերի ոչնչացմանը, և պատերազմի տարիներին ընդհանուր առմամբ տեղահանվեցին ավելի քան 700 հազար քրդեր, որոնց մոտ կեսը մահացավ տարագրության ճանապարհներին կամ սպանվեց թուրքական բանակի զինվորների ու ոստիկանների կողմից: Իսկ մի շարք շրջաններում քուրդ բնակչությունն առանց տեղահանության ուղղակի կոտորվեց թուրքական բանակի ուժերով: Խիստ հետաքրքրական է հեղինակի վկայակոչած այն փաստը, որ Սարիղամիշի ճակատամարտում ոչնչացված թուրքական բանակի 90 հազար զինվորներից 70 հազարը եղել են քրդեր, և այդ առումով Էնվեր փաշան հայտարարել է, որ իրենք ոչ թե պարտվել են, այլ հաղթել:

Վ. Բայբուրդյանի կարծիքով՝ քրդական խոշոր զանգվածների մեղսակցությունը արևմտահայության ցեղասպանությունը վերջնականապես հայերին և քրդերին բաժանեց թշնամի բանակների:

Հանգամանորեն վերլուծելով առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված իրավիճակը՝ պատմաբանը եզրակացնում է, որ Արևմտյան Հայաստանը, որը հայերի ցեղասպանության հետևանքով վերածվել էր ամայի մի երկրի, քուրդ ազգայնականների քաղաքական ծրագրերի իրականացման համար դարձավ եզակի մի օբյեկտ:

Վ. Բայբուրդյանը ուշագրավ տեղեկություն է հաղորդում, որ Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունը քայլեր էր կատարում հայ-քրդական միացյալ ճակատ ստեղծելու ուղղությամբ: Հետևանքը եղավ այն, որ 1919 թ. նոյեմբերին ստորագրվեց մի համատեղ հուշագիր՝ ուղղված վեհաժողովին, որի տակ ստորագրել էին Պողոս Նուբարը, ՀՀ պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանը և «Քրդական ազգային պատվիրակության նախագահ» Շերիֆ փաշան: Իհարկե, այդ փաստաթուղթը որևէ ուշադրության չարժանացավ:

Ներկայացնելով 1919 թ. աշնանից սկսած ՀՀ ջանքերը Արևմտյան Հայաստանի տարածքների վերագրավման ուղղությամբ՝ հեղինակը նշում է, որ այդ գործում ամենամեծ խոչընդոտները երկուսն էին՝ քեմալական իշխանությունները և քրդերը: Նա եզրակացնում է, որ քեմալականներն աշխատում էին Արևմտյան Հայաստանի քրդական առաջնորդներին և քուրդ բնակչությանը համախմբել հակահայկական պլատֆորմի վրա, որովհետև քեմալականների և քրդերի շահերը Հայկական հարցի կապակցությամբ կատարելապես համընկնում էին:

Նշվում է, որ 1920 թ. սկզբներին Հայաստանի սահմաններում բնակվող քրդերը վտանգավոր ուժ էին ՀՀ համար: 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ նրանց մի մասը միացավ թուրքերին և կռվեց ՀՀ դեմ:

Հայտնվում է այն միտքը, որ երբ 1923 թ. հոկտեմբերի 18-ին Թուրքիայի ազ-

գային մեծ ժողովը օրենք ընդունեց ավազակային շարժումները ճնշելու վերաբերյալ, քրդերը հասկացան, որ հայերի, հույների և ասորիների կոտորվելուց ու երկրից քշվելուց հետո իրենք մնացել են մենակ, և թուրքական վտանգը բացառապես կենտրոնացած է իրենց դեմ:

Վ. Բայբուրդյանը հատուկ քննարկման առարկա է դարձրել քրդական և Հայկական հարցերի արծարծումները Սևրից մինչև Լոզան ընկած ժամանակաշրջանում: Նա կարծիք է հայտնում, որ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի դաշնագիրը, որը Վերսալյան համակարգի պսակն էր, ըստ էության, մահվան դատավճիռ էր Օսմանյան կայսրության համար: Պայմանագիրը կոչված էր լուծում տալու անկախ Հայաստանի և Քրդստանի խնդիրներին: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանը քարտեզի վրա ստացավ մի տարածք, որը հավասար էր 127 հազար քառ. կիլոմետրի՝ հարմար ելքով դեպի Սև ծով: Սակայն դաշնակիցները չասացին, թե ինչպես էին հայերը ստանալու թղթի վրա իրենց տրված հողերը, որոնք գտնվում էին թուրքերի հսկողության տակ:

Հեղինակը կարևոր է համարում նշել, որ Սևրի պայմանագրով հայկական վեց վիլայեթներից երեքը դուրս բերվեցին նրա տարածքից, իսկ Եփրատից արևելք ընկած տարածքներն ամրակցվեցին Քրդստանին: Նշելով, որ Սևրի պայմանագրի 62-64 հոդվածները վերաբերում էին քրդական հարցին, պատմաբանը միաժամանակ ուշադրության է հրավիրում, որ Քրդստանն այնտեղ չէին ստեղծում, որտեղ պետք էր ստեղծել, որովհետև Քրդստանին հատկացվող Դերսիմի և Խարբերդի սանջակները էթնիկական ու աշխարհագրական առումով կազմում էին Հայկական բարձրավանդակի անբաժանելի մասը:

Իբրև Սևրի պայմանագրի դրական կողմ նշվում է, որ դրանով տերությունները ճանաչեցին հայ ժողովրդի պետականություն ունենալու անկապտելի իրավունքը, և պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները այսօր էլ շարունակում են մնալ որպես Հայկական հարցի միջազգային ճանաչման խորհրդանիշ:

Խիստ արդիական է հնչում Վ. Բայբուրդյանի այն միտքը, թե Սևրի պայմանագրի բարոյական ուժը մնում է ընթացքի մեջ, և Սևրը ինքնին դիվանագիտական հաջողություն էր Հայաստանի համար:

Հեղինակը հետևողականորեն ցույց է տալիս, թե ինչպես 1921 թ. փետրվար-մարտին տեղի ունեցած Լոնդոնի խորհրդաժողովում Միացյալ և Անկախ Հայաստանը փոխարինվեց «Ազգային օջախի» գաղափարով, իսկ ինքնավար Քրդստան ստեղծելու հարցը իսպառ հանվեց:

Փաստական նյութի հիման վրա ցույց է տրվում, որ 1922 թ. նոյեմբեր – 1923-ի հուլիսին տեղի ունեցած Լոզանի խորհրդաժողովում դաշնակիցների թողտվությամբ գերեզմանվեց ոչ միայն Հայկական, այլև Քրդական հարցը:

Աշխատության վերջում Վ. Բայբուրդյանն անդրադարձել է 1920–1930-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած քրդական մի շարք հուժկու ապստամբություններին և այդ ժամանակաշրջանում հայ-քրդական համագործակցության ուղղությամբ Հայ հեղափոխական դաշնակցության գործիչներ Վահան Փափազյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի ջանքերին:

Գիտատեսական, փաստավավերագրական և գիտաճանաչողական մեծ արժեք ներկայացնող սույն ուսումնասիրությունն ավարտվում է այն արդիական խորհրդածությամբ, թե մեր օրերի հրամայականն է, որ հայ և քուրդ ժողովուրդները զգաստ մտքով ու խորաթափանց հայացքով վերագնահատեն իրենց անցյալի հարաբերությունները, որպեսզի կարողանան հավատով և վստահ հայացքով նայել ապագային:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ